

լով Ստեփանոս որդին ալ: Աճառեան կը գրէ:

« Ստեփանոս Ռոշքա Սարգսեան, Կա- մենիցացի, Օֆիցիալ Ստանիսլաու. ծն. 1670 թ. † 1739 թ.: Կամենից քաղաքի աւագերէցն էր: Ունի Տրամարանութիւն, Փիլիսոփայութիւն, Բարոյական Աստուածարանութիւն, Նամականի, Ժամանակագրութիւն, բայց իր մեծագոյն գործն է ընդարձակ բառարան հայ-լատին, և լատին-հայ, որ կոչուում է Գանձ հայերէն լեզուի » (հատոր Գ. տպ. Երեւան 1948):

Յայտնի է վրիպումը: Ստեփան Սարգսեանը հայրն է, ոչ թէ որդին՝ որ կը կոչուի Ստեփանոս Ստեփանեան, այսինքն որդի Ստեփանի, և իր ընտանեկան մականունով՝ որ հասարակաց է երկուքին՝ Ռոշքա:

Աճառեանի համաձայն, հեղինակը Փիլիսոփայութեան, Բառարանին, և միւս յիշատակուած գործերուն՝ Ստեփան Սարգսեանն է, որ բոլորովին սխալ է և անտեղի: Իննգիսն թուականը, տիտղոսները և գործերուն յիշատակումը որդիէն անցած է հօրը: Այս պատմական սխալը հետեւանք է անոր նամակներուն անտեսութեանը:

Կենսագրական ուրիշ տեղեկութիւններ կը պակսին մեզի: Գիտենք միայն մահուան թուականը, որ է 31 Հոկտեմբեր 1739: Մեռած է Սթանիսլաուով քաղաքը, ուր ննջեցեալներու արձանագրութեան ցուցակին մէջ կը գտնենք իր անունը հետեւեալ տողերով փառաւորուած.

« Stephanus Roscka singularis doctrinae, eruditionis ac pietatis Praelatus, plurimis saeculis memorandus, qui editis plurimorum voluminibus, vere cum sole dispersit manus suas ab Occidente in Orientem plenus dierum et meritum confessus et sacra synæi reffectus obiit.

Այսինքն՝

Ստեփանոս Ռոշքա պատուակալ քահանայ, օժտուած բացառիկ գիտութեամբ, հմտութեամբ և բարեպաշտութեամբ, յիշատակելի երկար դարերով, որ թողուց բազմաթիւ հատորներ, տարածեց իր ձեռքերը արեւուն հետ Արեւմուտքէն Արեւելք, լի օրերով և արժանինքերով և զօրացած սուրբ Խորհրդով վախճանեցաւ »:

Լեհաստանի առաքելութիւնը շատ բան կը պարտի իրեն, որպէս կազմակերպութիւն, որպէս մշակութային շարժում: Իր նամակներուն մէջ կարելի է գտնել լայնօրէն վկայութիւններ իր կատարած դերին:

Բանասիրութեան մէջ իր անունը շփոթուած է միւս Ստեփանոս Լեհացիին հետ: Ստեփանոս Ռոշքեան կոչուած է կրտսեր, համեմատութեամբ միւսին՝ որ ժամանակով աւելի առաջ էր, մեռած 1681-ին: Ան ալ Լեհաստանի գաղթական հայերէն էր, և ճանչցուած որպէս հեղինակ և թարգմանիչ. և թողով Լեհաստանը Նիկոլի հալածանքներու շրջանին, անցած է Էջմիածին և պատուուած Փիլիպպոս կաթողիկոսէն: Թարգմանած է Յովսէպոսի Պատմութիւնը, Դիոնեսիոս Արիստակազեանի գործերը, Արիստոտէլի Բնագանցականքը, եւայլն:

ԲԱՌԱՐԱՆԻՆ ԹՈՒԱԿԱՆԸ

Բառարանին յօրինման թուականը նշանակուած չէ ոչ սկիզբը և ոչ ալ գործին վերջաւորութեանը: Զայն ստուգելու համար հարկ է զիմել ուրիշ աղբիւրներու: Ստեփանոս Ռոշքեան կու տայ մեզի այդ աղբիւրներն ալ: Անոնք իր նամակներն են, որոնց մէջ, բացի այս թուականի խնդիրէն, ուրիշ շատ բան կայ նկատմամբ իր կեանքին և գործերուն և լեհահայ գաղթականութեան կեանքին և անցուղարձեւրուն: